Ութերորդ հաղորդում

Ճանաչել և փորձառաբար ապրել համաբովանդակ Քրիստոսին Մատթեոսի Ավետարանում

Գրվածքների ընթերցում. Մտթ 2:1-2, 3:11, 4:12-16, 8:20, 16:16, 21:5

I. Քրիստոսը երկնային Թագավորն է՝ Մտթ 2:1-2, 21:5.

Ա. Մատթեոսն ապացուցում է, որ Հիսուսը Հին Կտակարանի մարգարեություններում կանխագուշակված Թագավորն է՝ Մեսիան՝ 1:1, 17, 2:1-2, 27:11, 37:

Բ. Երկնային Թագավորը ոչ թե ամբարտավան շքեղությամբ եկավ, այլ նուրբ, խոնարհ հեզությամբ՝ 21:5:

II. Տեր Հիսուսը Քրիստոսն է՝ կենդանի Աստծու Որդին՝ 16:16.

Ա. «Քրիստոս» բառը մատնանշում է Աստծու Օծյալին և խոսում է Տիրոջ ստացած հանճարարության մասին, այն է՝ Իր խաչելության, հարության, համբարձման և երկրորդ գալստի միջոցով իրականացնել Աստծու հավիտենական մտահղացումը՝ խխ. 21, 27:

Բ. «Կենդանի Աստծու Որդի» արտահայտությունը խոսում է Նրա անձի մասին, որն իր մեջ մարմնավորում է Հորը և ավարտունանում է Հոգում՝ Եռամեկ Աստծու լիարժեք արտահայտության համար՝ Հվի 14:10-11ա, Ա Կրթ 15:45բ:

III. Քրիստոսը Մարդու Որդին է՝ Մտթ 8:20, 11:19, 13:37, 16:13.

Ա. Քրիստոսը մարդ է, ով Աստծու տիրակալությունը բերում է երկիր և Աստծու անունը երկրի վրա գերազանց է դարձնում՝ 9:6, 12:8, 13:41, 16:27-28:

Բ. Երկինքների թագավորության հիմնադրման համար Տեր Հիսուսը կանգնած էր որպես հաղթական մարդ, մարդ, ով կարող է պարտության մատնել Սատանային և դիմակայել ցանկացած դժվարության, դիմադրության ու հարձակման՝ 4:4, 12:40, 26:64:

IV. Քրիստոսը Մկրտիչն է՝ 3:11.

Ա. Սուրբ Հոգում Տիրոջ մկրտությունը, որը Նրա փրկագնման վրա էր հիմնված, նշանավորեց երկինքների թագավորության սկիզբը՝ Նրա հավատացյալներին բերելով երկինքների թագավորության մեջ՝ խ. 12ա:

Բ. Կրակի մեջ Տիրոջ մկրտությունը, որը Նրա դատաստանի վրա է հիմնված, կավարտի երկինքների թագավորությունը՝ անհավատներին կրակի լիճը նետելով՝ խ. 12բ:

V. Քրիստոսը մահվան ստվերում շողացող կյանքի լույսն է՝ 4:12-16.

Ա. Քրիստոսի երկինքների թագավորության համար նախատեսված սպասավորությունը ոչ թե երկրային զորությամբ սկսվեց, այլ երկնային լույսով:

Բ. Տեր Հիսուսն ինչ-որ արշավ կամ հեղափոխություն չսկսեց. փոխարենը Նա աշակերտներին Իր՝ որպես մեծ լույսի մոտ գրավեց երկինքների թագավորության հիմնադրման համար:

VI. Մարդկանց կանչելով՝ հետևելու Իրեն թագավորության համար, Քրիստոսը սպասավորում էր որպես Բժիշկ ու Իրեն բացահայտեց որպես Փեսայի՝ 9:9-15.

Ա. Նա եկավ որպես Բժիշկ, որպեսզի բուժի ու կենդանացնի մեզ, որպեսզի մենք, վերակազմվենք ու երկինքների թագավորության քաղաքացիները դառնանք՝ խխ. 9-13:

Բ. Մենք պետք է Նրան գնահատենք որպես Փեսայի, որպեսզի վայելենք Նրա ներկայության մեջ ապրելը՝ խխ. 14-15:

VII. Քրիստոսը չմշակված կտորն է նոր հագուստի համար՝ խ. 16, Ղկս 5:36.

Ա. Իր մարմնացումից մինչև Իր հարությունը Նա չմշակված կտորն էր նոր հագուստի համար:

Բ. Իր մահվան ու հարության միջոցով Քրիստոսը դարձվեց նոր հագուստը, որը մեզ ծածկում է որպես Աստծու առջև մեր արդարությունը, որպեսզի Աստծու կողմից արդարացվենք ու Նրա համար ընդունելի լինենք՝ 15:22, Գղտ 3:27, Ա Կրք 1:30:

VIII. Անհատական Քրիստոսը նոր գինին է, իսկ ընդհանրական Քրիստոսը՝ թարմ տիկը՝ Մտթ 9:17.

Ա. Նոր գինին Քրիստոսի՝ որպես նոր կյանքի խորհրդապատկերն է, որը լի է ավյունով ու առույգացնող զորությամբ, որը կայտառացնում ու բավարարում է մեզ:

Բ. Նոր տիկերը խորհրդապատկերում են ընդհանրական Քրիստոսին՝ արտաքին զետեղարանը, որը պարունակում է նոր գինին՝ Ա Կրք 12:12:

IX. Քրիստոսը Հովիվն է և հունձքի Տերը՝ Մտթ 9:35-38.

Ա. Իր թագավորության հիմնադրման համար նախատեսված Իր սպասավորության մեջ Տեր Հիսուսը սպասավորում էր որպես Հովիվ՝ խխ. 35-36:

Բ. Եթե տեսնենք Քրիստոսի՝ որպես հունձքի Տիրոջ տեսությունը, կաղաչենք Նրան, որ Նա Իր հունձքի համար մշակներ դուրս քշի՝ խխ. 37-38:

X. Քրիստոսը մեղավորների Ընկերն է և Աստծու իմաստությունը՝ 11:19.

Ա. Որպես մեղավորների Ընկերը՝ Քրիստոսը կարեկցում է նրանց դժբախտություններին և զգում է նրանց վիշտը՝ խ. 19ա:

Բ. Ինչ էլ Քրիստոսն աներ, ամեն բան արվում էր Աստծու իմաստությամբ, այսինքն՝ հենց Աստծով. այդ իմաստությունը հաստատված էր Նրա իմաստուն գործերով՝ խ. 19բ, Ա Կրք 1:24, 30:

XI. Քրիստոսը Նա է, ով հանգիստ է տալիս՝ Մտթ 11:28-30.

Ա. Տիրոջ լուծն ընդունել նշանակում է Հոր կամքն ընդունել ու Հոր կամքով զսպվել՝ խ. 29, Հվի 4:34, 5:30, 6:38:

Բ. Քանի որ Տերը միշտ բավարարված էր Հոր կամքով, Նրա սրտում մշտա-

պես հանգստություն էր տիրում. հիմա Նա խնդրում է, որ Իրենից սովորենք՝ Մտթ 11:28-30:

XII. Քրիստոսը Հովնանից ավելին է՝ 12:39-41, 16:4.

Ա. Հովնանը Քրիստոսի նախատիպն է Նրա մահվան, թաղման ու հարության մեջ՝ 12:39-41:

Բ. Հուդայական ու կրոնավոր սերնդի՝ չար ու շնացող սերնդի համար Տեր Հիսուսը ոչինչ չի անելու՝ մեկ բանից բացի. Նա կմեռնի ու հարություն կառնի որպես նրանց համար մեծագույն նշան, որպեսզի նրանք հավատալու դեպքում փրկվեն՝ 16:4:

XIII. Քրիստոսը հացն է և սեղանի տակի փշուրները՝ 15:21-38.

Ա. Աստծու տնտեսությունը ոչ թե ինչ-որ արտաքին բանի հետ է կապված, այլ Քրիստոսի՝ որպես կերակուր մեր մեջ մտնելու՝ խխ. 26, 34, 36:

Բ. Մենք պետք է մեր մեջ ընդունենք ուտելի Քրիստոսին՝ Նրանով՝ որպես հացով, նույնիսկ որպես սեղանի տակի փշուրներով սնվելով՝ խ. 27:

XIV. Քրիստոսն Իր մարդկայնության մեջ Նա է, ով հարուցանվել է և ունի ողջ իշխանությունը երկնքում ու երկրի վրա՝ 28:18-19.

Ա. Քրիստոսին Իր մարդկայնության մեջ՝ որպես Մարդու Որդու և երկնային թագավորության Թագավորի, ողջ իշխանությունը տրվեց Իր հարությունից հետո՝ խ. 18:

Բ. Քանի որ Մատթեոսի Ավետարանը կենտրոնացած է թագավորության վրա, իսկ թագավորության համար իշխանություն է անհրաժեշտ, այս Ավետարանում Քրիստոսի հարությունը կապվում է իշխանության հետ, որն անհրաժեշտ է ազգերին աշակերտ դարձնելու համար՝ խ. 19:

XV. Մատթեոսի Ավետարանը լի է Քրիստոսի հարստությամբ. մենք պետք է երկրպագենք Նրան, վայելենք Նրան ու փորձառաբար ապրենք Նրան՝ որպես հրաշալի, համաբովանդակ Անձի՝ 2:11, 28:9, 17, 17:5:

© 2026 Living Stream Ministry